4· արագել զքս Վարդավառին չաբաթն
աւ ըն եւ
5· կիւրակէն որ խափանէ դատի ի քէ։

Ouw. Mat. XIII.56· «Ես Զաղամայը կողակից», պէտք է կարդալ «Ես Զաղս մայը Վա(սակա եւ կե)նակից»։ Զունի «տան(ս եւ ետու սպ)ասն»· «եւ սպասաւորքս» պէտք է լինի «սպասաւորք սորա», «Շարանաւրին եւ Սիւրակենար...», անմիտ· պէտք է լինի «չաբաթն աւր եւ կիւրակէն, որ խափանէ դատի ի քէ»։

ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա· 126·
Բ· Գիրք 144·
ԱՂՋՈՑ Ս· ՍՏԵՓԱՆՈՍ

Աջակողմեան աւանդատան գլխին ներսից·

Կամաւն Այ ես Ռստա
կէս մեղուցեալ քա
հանա ըստացա զխո
բանս իմ հալալ արդեանց եւ
սպասաւորք սորա ...ե
.....Գ։ աւր ժ
.....բին թե ոք
.....եւ պարտակ
.....ղաց իմոց։

ԾԱՆՕԹ·— Ընդգծուած բառերը աղօտ, իսկ բազմակէտերով նշանակած մասերն խսպառ փչացած։

Ouw. Mat. XIII. 55 կարդում է առանց պակասները ցոյց տալու։

ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա· 127·
Բ· Գիրք 144·
ԱՂՋՈՑ Ս· ՍՏԵՓԱՆՈՍ

Հարաւային պատին ներսից·

1· †Կամաւն Այ ես Սարգիս որդի Սմպա
2· տա Թոռն Շղեանց ստացա զխորանս ի
հալալ արդեանց իմոց եւ սպասաւ
3· որք սրբոցս հաստատեցին ի տարոջն
4· Գ։ աւր ժամ։ Ա։ ինձ։ Ա։ իմ հաւրն։ Ա։
իմ մաւր
5· Նրճսին։ աւր նած ես Սարգիս զի նեղ աւ-
ուրք երեւ Զ։ Կ։ դահեկան
6· ի թս· ՈՀ?

ԾԱՆՕԹ·— Թուականը մենք չենք նշանակել պարզ չլինելու համար, բայց Ouw. Mat. XIII. 56· նշանակուած «ՈՐ», որ անկարելի է· որովհետեւ տաճարը կառուցուած է, ինչպէս տեսանք ԺԳ· դարու առաջին քառորդին· գուցէ ուղղելի է «ՈՀ», որ համապատասխան կը լինի չինութեան ժամանակին։

ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա· 128·
Բ· Գիրք 144· պատկ· 180
ԱՂՋՈՑ Ս· ՍՏԵՓԱՆՈՍ

Հարաւային պատին արեւելեան անկիւնում·

1· ...Պատրոնիկս եւ Արխունդիա գնեց
2· աք ի չինուած
3· սորա եւ սպասաւորքս ե
4· տուն ի ԺԲ։ աւր ժամ մե (s!) զկնի զատ-
կին

ԾԱՆՕԹ·— Զորրորդ տողում «զ» չի կրկնել, հետեւեալ բառի «զ»-ով սկսուելու պատճառով· նման օրինակներ պատահում են արձանագրութիւնների մէջ։ Ouw. Mat. չունի։

ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա· 129·
Բ· Գիրք 145· պատկ· 181·

Արեւմտեան դրան կամարի գլխին·

1· ...ՈԶԳ
2· (եւ) առաջն որ զ Տիրացու վարդապ
3· ետին ես Սեւադա որ զի Սմբատա մեղուց-
եալ ծառ
4· ա Այ եւ ամու սի ն իմ Թաճեր տուաք
զԴիքակի տափ ջրվո
5· զովն եւ զիմ ար կած այգին զՔալատակն
եւ զ աւ ետ ար ան իմ
6· պատուական ի սբ ու խոս եւ սպասաւորքս
7· ս որ ա խոստացան ինձ... պատ ար ագ ի տ
8· ար ոջն նոր կիրակէին ար զ որ զհ
9· ողն եւ զայգին եւ զ աւ ետ ար անն հ
10· անէ ի վանացս եւ զժամն խ
11· ափանէ յ որ ժամ գա Քս զխափ
12· անողնՅս Քս ապա նողացն
13· համարեսցի ամէն·

ԾԱՆՕԹ·— Առաջին տողում կոտրուել է մի քանի տառի տեղ եւ պէտք է լինէր «ի թվ» կամ «ի թու»։

Երկրորդ տողում կոտրուած սկզբի տառերը, բայց նկատւում «եւ ա», ուստի եւ փակագծի մէջ դրինք։ Եօթերորդ տողում կէտադրուած մասում պատարագների թիւը պիտի լինէր· «ինձ... պատարագ»։ Վստահեցնում ենք, որ ամբողջը մեր կողմից կարդացուած է տեղում եւ վերստուգուած լուսանկարչական պատկերի համեմատութեամբ իւր կցումներով ամենայն ճշդութեամբ, ուստի եւ Ouw. Mat. XIII. 57 «Այն է·· Տեառն Աստուծոյ ի վերայ» բառերը սխալ եւ աւելորդ։ Տարաբաղդաբար մեր կլիշէն աղօտ է եւ հնարաւոր չէ ընթերցողին անձամբ ստուգել։